



## Գիտական նորույթը

Հեղինակն առաջին անգամ Հայաստանի առողջապահական համալսարանի իրականացրել է դիմաձևնոտային շրջանի վնասվածքների համամարակաբանական վերլուծություն:

Առաջարկվել է ստորին ծնոտի կոտրվածքների բուժման համար միջձևնոտային սևեռման նոր մեթոդ վակուումային կապպաների կիրառմամբ:

Հիվանդների մոտ Վասիլիևի բեկակալներով և հեղինակի առաջարկվող միջձևնոտային սևեռման կապպաներով դիմամիկ բուժման ընթացքում կատարվել է պարօդոնտալ ինդեքսների համեմատական վերլուծություն և գնահատում (PMA ինդեքս, CPITN ինդեքս): Իրականացրել է միջձևնոտային սևեռման տարբեր տեսակների ազդեցության համեմատական գնահատում ՔՄՕՀ-ի վրա՝ հիմնվելով համակարգչային մոդելավորման և վերջավոր տարրերի վերլուծության մեթոդների վրա (FEA):

## Աշխատանքի գիտական և գործնական նշանակությունը

Լ.Վ. Ալեքսանյանի աշխատանքի գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ հեղինակը ստորին ծնոտի կոտրվածքների բուժման ընթացքում միջձևնոտային սևեռման համար առաջարկում է օգտագործել վակուումային ազդեցության կապպաները, որոնք կարող են օգտագործվել ինչպես կոնսերվատիվ, այնպես էլ համակցված բուժման նպատակով: Այս մեթոդի կիրառումը զգալիորեն կարող է նվազեցնել միջձևնոտային սևեռման տևողությունը, կանխել ատամների և ալվեոլյար ելունի վնասումը, չի հանգեցնում հողազլխիկի հատվածում լարվածության և վերջապես, չի պահանջում հետացման հատուկ վիրաբուժական միջամտություններ: Այն կարող է օգտագործվել նաև այլ կլինիկական դեպքերում, երբ հայտնի ավանդական բուժման մեթոդների կիրառումը (Վասիլիևի բեկակալ և պտուտակ MHF) անհնարին է կամ հակացուցված (խորը կծվածք, պարօդոնտիտներ կամ կրաուդինգ): Առաջարկվող վակուումային կապպաները միջձևնոտային սևեռման համար կարող են առաջարկվել և ներդրվել դիմաձևնոտային վիրաբուժական կլինիկաներում լայն օգտագործման նպատակով:

## Ատենախոսության և սեղմագրի բովանդակության գնահատում

Ատենախոսությունը կարող է հանդիսանալ մենագրական աշխատություն, որի ծավալը, կառուցվածքը և ձևավորումը կատարվել է պատշաճ ըստ գործող պահանջների, հետազոտության մեթոդները ժամանակակից են և օրյեկտիվ, հետազոտության արդյունքները մշակվել են համապատասխան վիճակագրական մեթոդներով: Ներկայացված ատենախոսական աշխատանքը պարունակում է բավարար քանակությամբ կլինիկական նյութեր, հետազոտության վերլուծության տվյալներ, գծագրեր, գրաֆիկներ:

Ատենախոսության հիմնական գիտական դրույթները և եզրակացությունները ձևակերպված են հստակ, հիմնավորված են և տրամաբանորեն բխում են հետազոտության ստացված արդյունքներից:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակության հիմնական դրույթներին, եզրահանգումներին և գործնական առաջարկություններին:

Ատենախոսության նյութերը ներկայացվել են տեղական և միջազգային գիտաժողովներում, կոնգրեսներում: Ատենախոսության նյութի բովանդակությամբ տպագրվել է 6 հրապարակում:

### Օգտագործման վերաբերյալ արդյունքների հետագա առաջարկությունները և ատենախոսության եզրակացությունը

Հեղինակը առաջարկում է օգտագործել վակուումային կապպաներ, քանի որ նոր մեթոդը, ինչպես և ներկայումս հայտնի միջոցնոտային սևեռման ավանդական բոլոր մեթոդները Վասիլևի բեկակալներ, պտուտակներ, ապահովում է կայուն միջոցնոտային ֆիքսացիա ոսկրային բեկորների սերտաձման ողջ ժամանակաընթացքում: Սակայն բերանի խոռոչի հիգիենայի պահպանումը, միջատամնային պտկիկների և ավվեոլյար էլունի վիճակը շատ ավելի ապահով է կապպաներով սևեռման դեպքում, քան Վասիլևի բեկակալների ժամանակ: Տեղային բարդությունների վերլուծությունը ցույց է տվել, որ առաջարկված կապպաների միջոցով միջոցնոտային ֆիքսացիայի ժամանակ ոչ մի դեպքում չեն նկատվել ոչ առաջնային, ոչ երկրորդային բարդություններ, իսկ Վասիլևի բեկակալներով և պտուտակներով միջոցնոտային սևեռման ժամանակ առաջացել են առաջնային և երկրորդային բարդություններ:

### Դիտողություն աշխատանքի վերաբերյալ

Աշխատանքի ընդհանուր դրական գնահատմամբ պետք է նշել, որ կան որոշակի ոճային սխալներ, ինչը չի նվազեցնում գիտական աշխատանքի գործնական նշանակությունը: Խորհուրդ է տրվում անցկացնել ՔՄՕՀ-ի վիճակի լայն համեմատական կլինիկական ուսումնասիրություն միջոցնոտային ֆիքսացիայի տարբեր մեթոդների կիրառումից հետո:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Լուսինե Վարդանի Ալեքսանյանի «Վակուումային կապպաների օգտագործման հիմնավորումը միջոցնոտային սևեռման նպատակով ստորին ծնոտի կոտրվածքով հիվանդների մոտ» բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման համար ներկայացված ատենախոսությունը ավարտուն գիտական աշխատանք է, որը նորարական և առաջադեմ լուծումներ է առաջարկում դիմաձնոտային վնասվածքաբանության կարելուր հիմնախնդրի ասպարեզում:

Աշխատանքը նորարարությամբ, գիտական նորույթով, հետազոտության ծավալով և գործնական նշանակությամբ լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կանոնակարգի պահանջներին, իսկ հայցորդն արժանի է ԺԴ.00.12.-«Ստոմատոլոգիա» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Աշխատանքը քննարկվել և հավանության է արժանացել ՀՀ ՊՆ Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալի ՌԴՎ ամբիոնի ընդլայնված նիստում՝ 2023 թ. մայիսի 10-ին (արձանագրություն N 10): Նիստը նախագահում էր ՌԴՎ ամբիոնի պետ, **ԿԿԶՀ միտաբուժության** և հին հետազոտության ղեկավար, բ.գ.թ. Կ.Ռ. Շաբոյանը: Նիստին ներկա

